7329

329.14
Z-24

2010

10404

323
Հ-24

48

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

FB 2001

ՆԻՒ ԵՈՐՔ
1895

370
Գ038-ԿԱ
329.14
Հ-24
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅ.ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Центральная Библиотека
7/XI 1922
имени Мясникова
Ա. ՍՅԱԿԻ ՅԱՆԻԱՆՎԱՆ
1004
15983
87643-ԱՀ
10404

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդուած Ա.

ՆՊԱՏԱԿ

Դաշնակցութեանս նպատակն է թ գործ դնել ամեն ջանք և միջոց ըստ պահանջմանց ժամանակին և դիպաց, առյաջատել Օսմանեան Հայաստանն Թրքական լծէն և ի հաստատել անդ վարչական այնպիսի դրութիւն մի որ ապահովէ կեանք, սեպհականութիւն և պատիւ, և խղճի ու մտքոյ ազատութիւն, և նպաստաւոր լինի Հայոց ազգային զարգացմանն։

Յօդ. Բ.

ՍԿԶԲՈՒՆՔ

1. Օսմանեան Հայաստանն է Հայոց հայրենիքն ուր պէտք է ձգտիլ, ընդ թեւարկութեամբ մեծ պետութեանց, հաստատել բարւոք կառավարութիւն մի, որ

ասա վոխսուի հայկական ինքնօրինութեան։

2. Հայկական ինքնօրինութեան սկզբունքն պիտի լինի կառավարութիւն ժողովրդին համար՝ ժողովրդեան ընտրեալներով։

3. Ժողովրդային ինքնօրինութիւնն խախուտ և վտանգաւոր է եթէ անմշակ ժողովրդի ձեռքն լինի, ուստի դաշնակցութիւնս այժմէն իսկ, և ա՛լ աւելի երբ եւրոպական թեւարկութիւն հաստատուի Հայաստանում, պիտի աշխատի հայ մանկաւոյ և ժողովրդի կրթութեան վսեմ գործին։

4. Դաշնակցութեանս կազմաւորումն և գործունէութիւնն ինքնօրինութեան, կեդրոնակցութեան և ինքնակրթութեան սկզբամբ պիտի լինին։ Դաշնակցութեանս ճիւղերն պիտի լինեն ինքնօրէն և միանգամայն միջակախ, և իրենց ժողովոց, ներքին և արտաքին յարաբերութեանց մէջ պիտի ընթանան սկզբունք ունենալով հայրենասիրութիւնն եղբայրասիրութեամբ, ճշմարտութեամբ և արդարութեամբ։

Յօդ. Գ.
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Յորչափ Դաշնակցութիւնս մի ճիւղ ունենայ, այդ ճիւղ կը գործէ անկախօրէն, կ'ունենայ իւր ելեմուտ և իւր ծեռնարկներ։

Երբ դաշնակցութիւնս երկու ճիւղ ունենայ, յայնժամ երկուքն պիտի կեդրոնանան, այսինքն մի կեդրոնական վարչութիւն պիտի դեկավարէ երկու ճիւղերուն միացեալ գործոդութիւններն։

Երբ երեք, չորս, տասն կամ աւելի ճիւղեր կազմուին այլև այլ քաղաքաց մէջ, ամենուն համար մի ընդհանուր կեդրոն պիտի լինի, կամ կեդրոնական վարչութիւն։

Կեդրոնացումն պիտի կրնայ երկու ասպիճան ունենալ,—երկրային և համաշխարհային։ Ամերիկայի մէջ կազմուած ճիւղերն կ'ունենան իրենց ամերիկեան (երկրային) մէկ կեդրոնն, Ֆռանսայի ճիւղերն իրենց Ֆռանսական կեդրոնն, Պուլկարիոյ ճիւղերն՝ իրենցն, ևն։ Այս երկրային կեդրոններէն վեր պիտի կենայ համաշխարհային կամ տիեզերական կեդրոնն, որ մէկ կողմէն արտասահմանի երկրային կեդրոնաց և միւս կողմէն բուն Հայրենիքի կեդրոնին միջև յարաբերութեանց գործարան կը լինի։

Յօդ. Դ.
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՃԻՒՂԻՑ

1. Մասնաճիւղ մի կը կազմակերպէ ինքզինք՝ ընտրելով մի դիւան,— այսինքն մի ատենապետ, մի դեր-ատենապետ, մի ատենադպիր, և մի գանձապետ։ Կ'ընտրէ նաև մի Գործադիր Ժողով, որ կը բաղկանայ ատենապետէն ատենադպրէն և գանձապետէն, առաւել՝ երկու ուրիշ անդամներէ։

2. Ճիւղի դիւանին անդամք կ'ընտրուին մէկ տարուց համար և վերընտրելի են։

3. Անդամ կրնան ընդունուիլ երկու տեսակ Հայեր, որք վստահելի, անկեղծ և ուղղամիտ կը ճանչցուին։ Ընտրելին պէտք է երկու անդամներէ յանձնարարուի Գործ. Ժողովոյ, և սա, եթէ յարմար գտնէ, յանձնարարէ զայն ընդհանուր անդամական Ժողովոյ քուէարկութեան։ Անդամ ընդունուելու համար ընտրելին պարտի ստանալ ներկայ անդամոց գոնէ երեք չորրորդին քուէներն։

4. Ճիւղի անդամական Ժողովներն պիտի լինին առ նուազն ամիսն վիանդամ. կրնան լինիլ աւելի յաճախ։

5. Կանոնաւոր Ժողով անելու և որոշումներ քուէարկելու համար հարկ է որ անդամոց առ նուազն մէկ չորրորդն ներկայ գտնուի։

6. Քուէարկութիւնք կը լինին ձեռամբարձ, բայց եթէ մեծամասնութիւնն ուզէ, կը լինի գաղտնի։

7. Ճիւղ մի իւր անդամական Ժողովոյ, հրապարակային հաւաքումներու և այլ տեղական աշխատութեանց ծախքերն հայթայթելու համար պէտք է մասնաւոր անդամական տուրք մի որոշէ։ Այս տուրքն կրնայ լինիլ շաբաթական, և կրնայ աւելի կամ նուազ լինիլ ըստ պիտոյից։ Ճիւղին անկ է զայդ որոշել և փոփոխել։

8. Ամեն ճիւղ պարտաւոր է կանոնաւոր տուրք տալ Դաշնակցութեան նպատակն յառաջ տանելու համար։ Անդամական այս ընդհանուր տուրքն չափն ամեն ճիւղի համար նոյն պիտի լինի, այսինքն շաբաթական 5 ոէնթ կամ 25 սանթիմ։

Այս տրոց դումարն ամեն երկու ամիսն անդամ մի ճիւղի դիւանին կողմէն պիտի փոխանցուի երկրային կեդրոնին։ Երկրային կեդրոնն պիտի գործածէ այդ դումարներ Դաշնակցութեան նպատակին համար ցորչափ կազմուած չլինի համաշխարհային կեդրոնն։

9. Դաշնակցութեանս նպատակին անհաւատարիմ կամ անոր կարգ ու կանոնին դէմ յանցաւոր եղող անդամի մի արարքն նախ պիտի ներկայացուի Գործ. Ժողովին, որ նախնական քննութենէ վերջ պիտի ներկայացունէ խնդիրն ճիւղի ընդհանուր Ժողովին, և սա ալ, եթէ արժան համարի, վերջնական տեղեկագիր մի պատրաստելու պաշտօն պիտի տայ յատուկ Յանձնաժողովոյ մի։ Յանցաւոր դատուած անդամն պիտի պատժուի, ըստ ծանրութեան յանցանացն, տուգանքով կամ ձգուելով Դաշնակցութեանս անդամակցութենէն։

Յօդ. Ե.

ԵՐԿՐԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ ԵՒ ԺՈՂՈՎ

1. Ճիւղ մի իւր անդամոց թուոյն համեմատ երեսփոխական պիտի առաքէ երկրային Ժողովին, և իրաւունք ունի ամեն 20 անդամի համար մէկ երեսփոխան յղելու։ Եթէ ճիւղ մի 20 անդամ չունի, պարտի ուրիշ ճիւղի հետ միանալ առ այդ նպատակ։ Եթէ երեսփոխան մի 40 անդամի ներկայացուցիչ է, 2 քուէի իրաւունք ունի։

2. Տարին առ նուազն մէկ անդամ երկրային բոլոր ճիւղերն պիտի ունենան

մի համաժողով։ Արտասովոր երկրային համաժողով կրնայ տեղի ունենալ եթէ երկրային կեդրոնին թելադրութեամբ ճիւղերուն մեծագոյն մասն հաւանին։

3. Երկրային համաժողովը ընտրելեաց կրկնապատիկ ցանկի մի վերայ քուէարկելով պիտի ընտրէ երկրային կեդրոն, որ պիտի բաղկանայ երեք հոգիէ։

Երկրային կեդրոնի անդամոց պաշտօնավարութիւնն կը տևէ երկու տարի, և վերընտրելի են։

4. Երկրային կեդրոնն Դաշնակցութեան նպատակին համար պարտ ու պատշաճ միջոցներն ի գործ դնելու պաշտօն ունի։ Նա ճիւղերու կողմէն իրեն յղուած բոլոր դրամներն Դաշնակցութեան նպատակին համար գործածելու իշխանութիւն ունի, ցորչափ համաշխարհային կեդրոն դոյութիւն առած չլինի։

Երկրային կեդրոնն իւր գործառնութեանց և ելմտից տեղեկագիրն պիտի մատուցանէ երկրային համաժողովին։

Յօդ. Զ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆ

1. Ճիւղերն ամեն հարիւր անդամի կողմէ մէկ երեսփոխան համաշխարհային ժողովին առաքելու իրաւունք ունին։

Այն երկրի ճիւղերն որք՝ ի միասին առած՝ հարիւր անդամ չեն պարունակեր, պարտին ուրիշ երկրի մի ճիւղին միանալ երեսփոխանի ընտրութեան համար։

Եթէ 200 կամ 300 անդամոց երեսփոխան է օք, երկու կամ երեք քուէի իրաւունք կը վայելէ նա համաշխարհային ժողովոյն մէջ։

2. Համաշխարհային ժողով տեղի կունենայ տարին միանգամ։

3. Համաշխարհային ժողովը ընտրելեաց քառապատիկ ցանկի մի վերայ քուէարկելով պիտի ընտրէ առ նուազն 3 հոգի, այն է համաշխարհային կեդրոնի անդամներն։ Եթէ Դաշնակցութեանս բովանդակ անդամոց թիւն, բոլոր երկրացն ի միասին առած, աւելի լինի քան 2,000, յայնժամ 5 անդամ կրնան ընտրուիլ իբրեւ համաշխարհային կեդրոն, եթէ յարմար դատէ ժողովը։

4. Համաշխարհային կեդրոնի անդամք կ'ընտրուին երեք տարեայ համար, և վերընտրելի են։

5. Համաշխարհային կեդրոնի ոևէ անդամն համաշխարհային ժողովոյ անվստահութեան քուէովն կրնայ պաշտօնանկ լինիլ։ Այդ դէպքի մէջ նոյն համաժողովն նոր անդամ կ'ընտրէ պակասելոյն տեղը, պաշտօնավարութեան մնացեալ ժամանակամիջոցին համար։

6. Համաշխարհային կեդրոնն Դաշնակցութեան բոլոր երկրային կեդրոններուն հետ յարաբերութեան մէջ պիտի լինի և անոնց նիւթական և բարոյական ոյժերն կազմակերպելով պիտի ծառայեցունէ Հայրենեաց փրկութեան գործին։

7. Համաշխարհային կեդրոնի անդամ մի տարեկան որոշ թոշակ մի պիտի ըն-

գունի և իւր բոլոր ժամանակ պիտի նուիրէ դաշնակցութեանս ծառայութեան։ Տարեկան թոշակն պիտի լինի 700 տոլար կամ 3,500 ֆրանք, իւր անձնական ծախուց համար։ Եթէ անդամ մի ընտանեկան պարտաւորութիւններ ունի կատարելու և չէ կարող վերոյիշեալ թոշակաւ փակել իւր ծախքեր, պիտի կրնայ, յատուկ որոշմամբ համաժողովին, ընդունիլ աւելի քան 3,500 ֆրանք։

8. Հ. կեդրոնն հ. ժողովոյն պիտի ներկայացունէ իւր գործառնութեանց և եկամիջ տեղեկագիրն, ուր պիտի երեւի բոլոր երկրային կեդրոններէ եկած դանձուց, ինչպէս ազգային և չհմաազգային նուիրատուներէ եկած գումարներն։

Իսկ ծախուց հաշիւ պիտի ներկայացունէ այնքան մանրամասնօրէն որքան խոհական թուի իրեն (կեդրոնին), ոսկայն պարտաւոր է գաղտնի ծախուց մանրամասն հաշիւն ալ արձանագրած պահպանել յայտնելու համար զայն ապագայ համաժողովի մի մէջ, երբ այլ ևս պատճառ չունենայ այն մասին գաղտնապահ մնալու։

ՀԱԽՃ ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ Պետական Գրադարան
7 VI 1922
Երևան, Մաշտոց 19
Ա. ՍՅԱՍ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
<< Ազգային գրադարան >>
NL0040776
Հ 28